ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԻՋԵՎԱՆԻ ԲԿ» ՓԲԸ
MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA
«IJEVAN MC» CJSC
МИНИСТЕРСТВО ЗДРАВООХРАНЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
«ИДЖЕВАН МЦ» ЗАО

377260 ՀՀ, ք.Իջևան, Նալբանդյան 1
РА,,Г.Иджеван,ул. Налбандяна 1
RA IJEVAN St Nalbandyan 1

☎ 0037440313
Էլ. փոստ – ijevanmedikalcenter@mail.ru

18.06.2026թ.

«Դիավանտ» ՍՊԸ-ի
Տնօրեն պարոն Դավիթ Առաքելյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծման մասին

Հարգելի պարոն Առաքելյան,

«Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 2026թ.-ի կարիքների համար Անխափան սնուցման սարքի (ԱՍԱ/UPS) ձեռքբերման նպատակով «Դիավանտ» ՍՊԸ-ի հետ 14.04.2026թ.-ին կնքվել է N ԻԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/13-1 ծածկագրով պայմանագիր, ըստ որի «Դիավանտ» ՍՊԸ-ն պարտավորվում էր 30 օրացուցային օրում (Հավելված 2) մատակարարել 14.04.2026թ.-ին կնքված ՈԻԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/13-1 ծածկագրով պայմանագրի Հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագրով սահմանված Անխափան սնուցման սարք (ԱՍԱ/UPS):

Սակայն մինչ օրս՝ 18.06.2026թ.-ը, «Դիավանտ» 'ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել 14.04.2026թ.-ին կնքված ՈԻԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/13-1 ծածկագրով պայմանագրով նախատեսված Անխափան սնուցման սարքը (ԱՍԱ/UPS):

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 2026թ.-ի հունիսի 18-ից միակողմանի լուծում է 14.04.2026թ.-ին կնքված N ԻԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/13-1 ծածկագրով պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտվել է պայմանգրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուր կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին

տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքնում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 1 550 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, իսկ որակավորման ապահովման գումարը կազմում է 2 325 000 (երկու միլիոն երեք հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ: Առաջարկում եմ 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի «ԱրարատԲանկ» ԲԲԸ-ում ունեցած 1510023858630100 հաշվեհամարին փոխանցել պայմանագրի կատարման և որակավորման ապահովման գումարները՝ համապատասխանաբար 1 550 000 և 2 325 000 ՀՀ դրամ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2026թ.-ի հունիսի 26-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված պայմանագրի կատարման և որակավորման ապահովման գումարները, ապա «Դիավանտ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված բոլոր գումարները անհրաժեշտ է վճարել վերը նշված հաշվեհամարին և վճարման հանձնարարականների բնօրինակները մինչև 2026թ.-ի հունիսի 26-ը ներառյալ ներկայացնել «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ:

«Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի
տնօրեն՝ **Ա. Մելիքսեթյան**

Կատարող՝
գնումների համակարգող
Արփինե Բուղդարյան
Հեռ. (0-33) 261014